Հայ ժողովրդական հեքիաթներ, 14, Վասպուրական. Երևան, 1999, 590 էջ:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը լույս ընծայեց «Հայ ժողովրդական հեքիաթների» 14-րդ հատորը, որում ընդգրկված են պատմական Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի հեքիաթները։ Անցյալ տարի լույս էր տեսել ազգագրական նույն տարածքի հեքիաթների 15-րդ հատորը[1], տպագրության պատրաստ է 16-րդը։ Բոլոր երեք հատորների նյութերը հիմնականում կազմված են անվանի բանագետ, ազգագրագետ և ժողովրդագետ Երվանդ Լալայանի բանահյուսական խմբարշավների, 1915—1916 թթ. Երևանում, Էջմիածնում, Թիֆլիսում, Վասպուրականի բնակավայրերից Ալեքսանդրապոլում հանդիպած գաղթականների՝ վասպուրականցի մտավորականներ Սենիքերիմ Շալճյանի, Շահեն Կուժիկյանի, Եղիշե Վարդանյանի, Երվանդ Պեզազյանի, Արտաշես Բարսեղյանի գրառումներից։

Ժողովրդական հեքիաթների հիմնական, հատկապես հրաշապատում տեսակները ձևավորվում էին շատ հնագույն ժամանակներից։ Համընդհանուր ճանաչում ունի այն տեսակետը, որ բանահյուսական այդ տեսակի մեջ կողք կողքի հարևանում են ազգայինն ու համազգայինը, հինն ու նորը, ընդհանուրն ու անհատականը, ավանդականն ու հանպատրաստին։ «Լինում է, չի լինում մի թագավոր» հեքիաթի պարտադիր նախաբան արտահայտությունը հնում ցեղային միություն, կազմավորված ընդհանրություն ու պետություն է նշանակել և համապատասխանում է հայ ժողովրդի կազմավորման հնավոր ժամանակներին։

Հայ էթնոսի կազմավորման երկարատև տեղաշարժերի, արևի տակ տեղ նվաճելու հլած մարդկային խմբավորումների բուռն ձգտման գեղարվեստական արտահայտություններից է «Հայկ և Բել» վիպերգի պատմությունն այն մասին, որ Հայկը Բելին սպանելուց հետո իր ժողովրդի հետ հաստատվում է Վանում, իսկ պատմագրության նորագույն տվյալներով հայ ժողովրդի կազմավորման փուլերից մեկը, «Հայ էթնոսի տարածման երրորդ և հիմնական երկրամասը,—կարդում ենք «Հայ ժողովրդի պատմության» մեջ,—Վանա լճի ավազանը հանդիսացավ...»[2]։

Վասպուրականը Մեծ Հայքի ութերորդ, ամենամեծ նահանգն է, արևելքից սահմանակից է Պարսկաստանին, հարավից Ռշտունիքին, հյուսիսից Բերկրին է՝ պատմական Քաջբերունիքը, իսկ արևմուտքից՝ Վանա լիճը, Բզնունյաց ծովը։

Պատմահայր Մովսես Խորենացին հայոց նախնիների գործունեության մեջ շատ դրվագներ ստուգաբանում է Վասպուրականի տարածքում առկա տեղանուններով։ Այստեղ են գտնվում Ագռավու քարը, Մհերի դուռը, հայոց ազգային վեպի Փոքր Մհերի հանգրվանը։ Խորենացու հաղորդած զրույցները մինչև XX դարասկիզբը կենցաղավարում էին Վասպուրականի հայոց միջավայրում։

Արշակունիների թագավորության ժամանակ Վասպուրականը պատկանում էր Արծրունիներին, որոնք մեր պատմությանն ավանդեցին հայրենապաշտպանության փառավոր, նաև տրխուր փաստեր։

Վասպուրականն ուներ նյութական ու հոգևոր հարուստ մշակույթ։ Վանա լճի հյուսիսում գտնվող Լիմ և Կտուց, հարավում Աղթամար կղզիները, Վարագա լեռան վրա գետեղված վանքերն ու եկեղեցիները աչքի են ընկել ոչ միայն իբրև պաշտամունքային, այլև կրթական, մշակութային, գրչության և մանրանկարչության կենտրոններ։ 919—921 թթ. Գագիկ Արծրունու օրոք Մանվել ճարտարապետի կառուցած Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին այսօր էլ մասնագետների ուշադրության կենտրոնում է։ 977 թ. Վասպուրականի Գուրգեն Արծրունի թագավորի պատվերով է Գրիգոր Նարեկացին երկնում հայ մատենագիտության հայերեն լեզվով գրված առաջին մեկնությունը, Իսրայելի թագավոր Սողոմոն Իմաստունին (մ. թ. ա. 965—928 թթ.) վերագրվող «Երգ երգոցը», հայ մեկնարանական գրականության լավագույն ստեղծագործություններից «Մեկնություն երգ երգոյն Սողոմոնի» հրաշալիքը։ Վարագա ժառանգավորաց դպրոցը Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ հայ ժողովրդին պարգևել է մտավորականներ, սերունդներ, այստեղ է հրատարակվել «Արծվի Վասպուրական» պարբերականը։ Վանը կամ պատմական Շամիրամակերտը միջին դարերում Արծրունիների նստավայրն էր, բուն քաղաքն ու Այգեստանը բաժանված էին Հայկավանից, Ս. Հակոբի, Հայնկույսների, Արարուց, Կյոր դարթաղերի։

---

1 Հայ ժողովրդական հեքիաթներ, 15, Վասպուրական. Երևան, 1998, էջ 511։

2 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 240։

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության 14-րդ հատորում ընդգրկված են Վան քաղաքի, Վան—Տոսպ գավառի Լամպկերտ, Կուռուպաշ, Թիմար գավառի Ալյուր, Գետաշեն, Արճակ, Հայոց Զորի Խառականց, Խորգոմ, Նոր Գեղ, Հարատենց, Լամպկերտ բնակավայրերի բնակիչներից գրառած թվով 53 հեքիաթներ։ Վասպուրականի հեքիաթների ամբողջական պատկերը ներկայացնելու նպատակով հատորում ներառվել են մատենագիտական հազվագյուտ նմուշներ՝ Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» 6-րդ գրքից (Թիֆլիս, 1890 թ.)՝ 4 հեքիաթ և Գ. Շերենցի «Վանա սաղի» 1-ին և 2-րդ գրքերից (Թիֆլիս 1885, 1899 թթ.) 14 հեքիաթ։

Վասպուրականի հեքիաթներն աչքի են ընկնում տեղավայրին բնորոշ անկրկնելիությամբ, արալեզների, ծառերի, մրգերի պաշտամունքի, քարեդարյան սիմվոլիկայի, քարը, հողը, դետինը ճեղքվելու և հերոսին Սանդարամետ տեղափոխելու պատմություններով։ Մարդն իրեն ճնշող բնական ու հասարակական ուժերից վեր բարձրանալու և նրանց վրա իշխելու ձգտումով՝ վերափոխումների, ֆետիշիզմի, հավատալիքների, կախարդանքի, հմայությունների, աղոթքների, անեծքների սիստեմ է ստեղծել, իրեն հաղորդել կյանքի բոլոր երևույթների շարժիչ ուժն ու կարգավորողը, արարիչը։

Հեքիաթային սյուժեներում առկա են բազում շերտավորումներ, որոնք գոյացել են մարդկային կյանքի զարգացմանը համընթաց, նրանց գործերի ու արարքների մասշտաբներն ու նպատակները նոր մակարդակի բարձրացնելու ակնկալիքներով. մի հարվածով ոչնչացնել բնության և հասարակության հրեշներին, հաղորդակցվել հեռավոր տարածությունների վրա, օգնության հասնել, մենակ կռվել հակառակորդի բանակների դեմ և ընդհանրապես անել այն ամենն, ինչ անհրաժեշտ է մարդկային սովորական վարքի համար։ Հեքիաթների աշխարհը հարուստ է իմաստուն, մարդու խորհրդատու, նրան օգնության հասնող ձիերով, ընչյուններով, օձերով, վիշապներով, հրաշագործ առարկաներով։

Հեքիաթի աշխարհը վեր է ածվում խոշորացված կերպարների ու գործերի աշխարհի։ Լցվում է հսկաներով, ազնվուրներով, որ սկզբնապես տոհմ ունեցող, տոհմիկ է նշանակել։ Այդ հսկաների գրպաններում սովորական մարդիկ կտեղավորվեին։ XVI դարից մեզ է հասել պորտուգալացի երկու ճանապարհորդների՝ Անտոնիո Տենրեյրոյի և Մեստրի Աֆոնսկի տարբեր ժամանակի գրառումները (հրատարակված Փարիզում)[3], որոնց մեջ, նկարագրելով Վասպուրականում իրենց շրջագայությունները, հեղինակները նշում են, որ հրաշքների այդ երկրում այնպիսի հսկաներ են ապրել, որոնց սրունքներին հազնող օղերի միջով մարդ կարող էր անցնել, կրել են զենքեր, որոնց բացակայությամբ և հերոսի քնած վիճակում միայն հնարավոր էր նրան հաղթել։

Հեքիաթը բանահյուսական մի շարք ժանրերի՝ ավանդություն, վիպերգ, դրամա, լիրիկական երգ, առած, առակ, ճարտար հյուսվածք է, ժողովրդի գեղարվեստական մտածողության անկրկնելի սինթեզը, հետագա ժանրերի հիմքն ու հողը, զինարանը։ Վասպուրականի հեքիաթների լեզուն իր մեջ խորացրել է նրանով խոսող ժողովրդի պատկերավոր մտածողությունը։ Հատկանշական է, որ մեր օրերում տաղանդաշատ բանաստեղծ Հովհաննես Շիրազը Վասպուրականի հեքիաթներից փոխառնելով «Սիամանթո և Խչեզարեի» սյուժեն վերածեց բանաստեղծական բարձրարժեք ստեղծագործության։

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության 14-րդ հատորը կազմել ու տպագրության է պատրաստել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Ալվարդ Ղազիյանը։ Հատորունի առաջաբան, այն համալրված է յուրաքանչյուր հեքիաթին վերաբերող հանգամանալից ծանոթագրություններով, հեքիաթների այբբենական տեղավայրերի և ասացողների ցանկերով, բարբառային բառարանով։ Բառերի բացատրությունը տրվում է հեքիաթներում նրանց իմաստային կիրառության համաձայն։

Հատորի համակարգչային բնագիրը պատրաստել է նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Հարություն Մարությանը։ Այդ աշխատանքների իրականացմանը աջակցել են Ռուբեն Գալշյանը (Լոնդոն) և Էդվարդ Դայանը (Սան Ֆրանցիսկո)։

«Հայ ժողովրդական հեքիաթների» 14-րդ հատորը հրատարակվել է Հայ մշակույթի հովանավոր, գերաշնորհ Մեսրոպ արք. Աշճյանի հովանավորությամբ, ում և տիկին Ժողեֆ Մելիքյանների նյութական հովանավորությամբ։

ԹԱՄԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

---

3 Տե՛ս Revue des Etudes Armeniennes. T. VIII, Paris, 1971, p. 175—181.